

քայլի վանքը, Լեոնակողման Անապատը, Փիլիպպոսի աղբիւրը և Յորգանան. կը նկարագրէ Զատիկի ձրագալոյցի Լուսաւորեայի արարողութիւնը, ինչպէս նաև քանի մը մասնաւոր դէպքեր: Իսկ կատարեալ լուծութիւն կը պահէ Երուսաղէմի Աթոռի այն ատենուան կացութեան վրայ. չի տար միաբանութեան անդամոց կամ դէթ անոր յայտնի դէմքերու անունները, չի ներկայացներ Սուրբ Տեղեաց մէջ Հայոց ունեցած իրաւական դիրքը, միաբանութեան հոգեւորական և մտաւորական ու տնտեսական կացութիւնը, անոր յարաբերութիւնները օտարներու հետ, վէճերը, ևայլն: Այդ տեղեկութիւնները չափազանց չահեկան պիտի ըլլային ու թանկագին աղբիւր մը այդ շրջանին Հայ-Երուսաղէմի պատմութեան համար<sup>(1)</sup>: Եւ սակայն իրաւունք չունինք այս մասին անփոյթ կամ զանցառու համարելու Զէլէպին, նկատի առնելով՝ որ անիկա ըլլալով պատանի մը, դեռևս հազիւ թեալիսած 12 տարիքը, չէր կարող անձերն ու իրերը դիտել և պատել այնպէս՝ ինչպէս պիտի ընէր իր հասուն տարիքին:

Հետեւինք քայլ առ քայլ Երեմիայի կեանքին՝ զանց ընելով, ինչպէս ըսինք, այն պարագաները որոնք հրատարակութեամբ ծանօթ են արդէն:

Փիլիպպոս կաթողիկոս 1652ին, Երուսաղէմի ժողովէն ետք, որուն անձամբ մասնակցած էր նաև Սիսի կաթողիկոս Ներսէս Սեբաստացին, կը մեկնի անկէ և նոյն տարուան Յունիս 19ին կը հասնի Կ. Պոլիս: Օրուան պատրիարքը՝ Եղիազար Այնթապցի՝ մեծահանգէս թափօրով կ'առաջնորդէ զայն Սամաթիոյ Ս. Գէ-

(1) Այդ տեսակէտէն ո՛րքան առաւելութիւն ունին Գրիգոր Դարանաղցիի (1606-1607, 1616-1617 և 1626-1628), Լեհացի Սիմէոն Դպրի (1616) և Զուար ձիյէրճիօղլու քահանայի (1712) նկարագրութիւնները: